ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է նոր խմբագրությամբ՝
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության
21.11.2024թ. թիվ 65-Լ որոշմամբ
Ուժի մեջ է՝ 25.12.2024թ.-ից

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N BS ___/20--

ք. Երևան *«___» _____ 20__ թ.*

_____,
(իրավաբանական անձի անվանումը և ներկայացուցչի ԱԱՀ կամ ֆիզիկական անձի ԱԱՀ),

(այսուհետ՝ «Հաճախորդ»), մի կողմից, և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Բանկ»), ի դեմս Գործադիր տնօրեն Գ. Մաչանյանի, այսուհետ միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Բանկը պարտավորվում է իր անունից և Հաճախորդի հաշվին, կամ Հաճախորդի անունից և նրա հաշվին, վարձատրության դիմաց և Հաճախորդի հանձնարարությամբ կատարել արժեթղթերով քաղաքացիաիրավական և այլ գործողություններ՝ կապված բրոքերային գործունեության իրականացման հետ:

1.2. Կողմերը պայմանավորվել են Պայմանագրի կատարման ժամանակ գործել Պայմանագրով նախատեսված դրույթներով, Պայմանագրի անբաժանելի մասը կազմող «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոններով» (այսուհետ՝ «Կանոններ») և դրանց հավելվածներով: Պայմանագրով և Կանոններով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. *<u>Բանկը պարտավոր է.</u>*

2.1.1. Հաճախորդի կողմից տրված պատվերները կատարել Հաճախորդի համար առավել ձեռնտու պայմաններով՝ համաձայն տրված պատվերի,

2.1.2. Հաճախորդի պահանջով հայտնել իրեն պատվերի կատարման ընթացքի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը,

2.1.3. Հաճախորդին փոխանցել վերջինիս կողմից տրված պատվերների կատարման արդյունքում ամբողջ ստացվածը,

2.1.4. Պատվերների կատարման արդյունավետության և լիարժեքության ապահովման նպատակով մինչև Պայմանագրի կնքումը Հաճախորդին տեղեկացնել Հանձնարարականների տեսակների և դրանց առանձնահատկությունների մասին,

2.1.5. Հաճախորդի համար վարել առանձին դրամային (ՀՀ դրամով և/կամ արտարժույթով) և դեպո հաշիվ,

2.1.6. Պատվերով տրված գործարքի չկատարման դեպքում վերադարձնել Հաճախորդին վերջինիս դրամական միջոցները և/կամ արժեթղթերը,

2.1.7. Պատվերի հիման վրա արժեթղթերի գնման կամ վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, գործարքի կնքման վերաբերյալ Կանոններով նախատեսված կարգով հաշվետվություն տրամադրել Հաճախորդին,

2.1.8. Հաճախորդի ցանկությամբ, յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 15-ը, Կանոններով նախատեսված կարգով, Հաճախորդին տրամադրել Պատվերների հիման վրա կատարված գործարքների և արժեթղթերով ու դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ հաշվետվություններ,

2.1.9. Առնվազն 5 տարվա ընթացքում պահպանել Պայմանագիրը և դրա հիման վրա արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և Հաճախորդի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել դրանց պատճենները՝ վավերացված Բանկի կնիքով և «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ: Նշված փաստաթղթերի պատճենահանման ծախսերը կրում է Հաճախորդը:

2.1.10. Հաճախորդի պահանջով Պայմանագրի միակողմանի լուծման դեպքում 3 բանկային օրվա ընթացքում Հաճախորդին պատկանող դրամական միջոցները և արժեթղթերը փոխանցել Հաճախորդին կամ նրա լիազոր ներկայացուցչին:

2.1.11. Գրավոր տեղեկացնել Հաճախորդին կնքվող գործարքի գծով հնարավոր շահերի բախման մասին, որը ստորագրվում է Հաճախորդի կողմից, եթե վերջինս այդ կապակցությամբ առարկություններ չունի:

2.1.12. Պահպանել Պայմանագրի և պատվերների հետ կապված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը:

2.1.13.

2.2. *<u>Հաճախորդը պարտավոր է.</u>*

2.2.1. Պահպանել Կանոնների դրույթները և վերջինիս փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև կատարել Բանկի կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների ընթացքում առաջացող պարտականությունները,

2.2.2. Վճարել Բանկին՝ նրա կողմից մատուցված ծառայությունների դիմաց,

2.2.3. Հատուցել իր կողմից տրված պատվերների կատարման ժամանակ Բանկի կատարած ծախսերը և վճարած ու վճարվելիք բոլոր հարկերը,

2.2.4. Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում վճարել տույժեր և տուգանքներ,

2.2.5. Ընդունել Բանկից պատվերների հիման վրա ամբողջ կատարածը,

2.2.6. Պահպանել Պայմանագրի և պատվերի հետ կապված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը,

2.2.7. Պայմանագրի միակողմանի լուծման դեպքում 10 բանկային օր առաջ տեղեկացնել այդ մասին Բանկին,

2.2.8. Պրոֆեսիոնալ դասակարգվելու դեպքում.

2.2.8.1 Բանկին տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել հաճախորդի պորֆեսիոնալ դասակարգման վրա:

2.2.8.2 Ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը ի վիճակի չլինելու գանահատելու և կառավարելու դեպքում, դիմել

Բանկին իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու համար ինչպես կոնկրետ, այնպես էլ բոլոր ծառայությունների մասով:

2.2.8.3

2.3. *Բանկն իրավունք ունի.*

2.3.1. Մերժել պատվերի ընդունումը կամ հրաժարվել դրա կատարումից Կանոններով սահմանված դեպքերում:

2.3.2. Հաճախորդի պատվերների կատարման նպատակով իր հայեցողությամբ ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգերից,

2.3.3. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց իրեն հասանելիք վարձատրությունը գանձել Հաճախորդի՝ Բանկում վարվող դրամային հաշվից,

2.3.4. Պայմանագրով սահմանված կարգով միակողմանիորեն փոփոխել բրոքերային ծառայությունների դիմաց գանձվող սակագները:

2.4. *Հաճախորդն իրավունք ունի.*

2.4.1. Կանոններով սահմանված կարգով Բանկին ներկայացնել պատվերներ՝ Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում,

2.4.2. Ետ կանչել իր կողմից Բանկին տրված պատվերը՝ Կանոններով սահմանված դեպքերում,

2.4.3. Պահանջել Բանկից Պայմանագրով և Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում հաշվետվությունների ներկայացումը:

2.4.4. Պրոֆեսիոնալ հաճախորդի կողմից դիմում ստանալու դեպքում, այդ հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ ինչպես կոնկրետ, այնպես էլ բոլոր ծառայությունների մասով՝ համաձայն հաճախորդի դիմումի:

2.4.5. Պայմանագրով սահմանված կարգով միակողմանիորեն լուծել այն:

3. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Հաճախորդի պատվերների հիման վրա կնքված գործարքների գծով արժեթղթերի ընդունումն ու առաքումը Բանկի կողմից իրականացվում է առևտրային համակարգերում, շուկաներում, որտեղ կնքվել է գործարքը, նախատեսված ժամկետներում և կարգով, կամ էլ երրորդ անձանց՝ գործարքի կոնտրագենտների հետ կնքած պայմանագրերի պայմանների համաձայն:

3.2. Բանկի կողմից Հաճախորդի պատվերի հիման վրա արժեթղթերի գնման գործարքի կնքման պահից մինչև տվյալ գործարքի գծով գնված արժեթղթերի դիմաց վճարման համար Հաճախորդի հաշվից միջոցների դուրս գրումը, Բանկը Հաճախորդի դրամային հաշվում սառեցնում է դուրս գրման ենթակա դրամական միջոցները և այդ հաշվից գործարքի կնքման պահին գանձում է Բանկի վարձատրության գումարը, որի համար Հաճախորդը լիազորում է Բանկին: Գնված արժեթղթերը դրանց ստացման օրը ենթակա են մուտքագրման Բանկի մոտ վարվող Հաճախորդի դեպո հաշվին:

3.3. Հաճախորդի պատվերի հիման վրա Բանկի մոտ վարվող Հաճախորդի դեպո հաշվում հաշվառվող արժեթղթերի վաճառքի գործարքի կնքման պահից մինչև տվյալ գործարքի գծով վաճառված արժեթղթերի առաքումը, այդ արժեթղթերը սառեցվում են Հաճախորդի դեպո հաշվում, իսկ Բանկի վարձատրության, կատարած ծախսերի ու վճարված (վճարվելիք) հարկերի գումարները գործարքի կնքման պահին գանձվում է Հաճախորդի դրամային հաշվից, որի համար Հաճախորդը լիազորում է Բանկին: Արժեթղթերի վա-

ճառքից ստացված դրամական միջոցները դրանց ստացման օրը ենթակա են մուտքագրման Բանկի մոտ վարվող Հաճախորդի դրամային հաշվին:

4. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց Հաճախորդը վարձատրում է Բանկին՝ համաձայն Բանկի կողմից հաստատված սակագների:

4.2. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սակագները՝ Հաճախորդին այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 20 բանկային օր առաջ ծանուցելու պայմանով:

4.3. Սակագների փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում, մինչև նոր սակագների ուժի մեջ մտնելը, Հաճախորդը կարող է միակողմանիորեն լուծել Պայմանագիրը: Այս դեպքում Բանկի և Հաճախորդի միջև փոխադարձ հաշվարկները կատարվում են նախկին սակագներին համապատասխան:

4.4. Բացի Հաճախորդի պատվերի հիման վրա կնքված գործարքի դիմաց Բանկի վարձատրության վճարումից, Հաճախորդը փոխհատուցում է նաև Բանկի կատարած այն ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են Հաճախորդի պատվերների կատարման հետ:

4.5. Պայմանագիրը Հաճախորդի կողմից միակողմանիորեն լուծելու դեպքում Հաճախորդը պարտավոր է փոխհատուցել Հաճախորդին պատկանող արժեթղթերի և/կամ դրամական միջոցների վերադարձման գծով Բանկի կատարած ծախսերը:

4.6. Այն դեպքում, երբ Բանկը գործարքը կնքել է Հաճախորդի հանձնարարականում նշված պայմաններից ավելի ձեռնտու պայմաններով, լրացուցիչ օգուտը Բանկի և Հաճախորդի միջև բաշխվում է հավասարաչափ:

4.7. Բանկի վարձատրության և Պայմանագրով նախատեսված այլ ծախսերն ու հարկերը Բանկի կողմից գանձվում են Հաճախորդի դրամային հաշվից:

4.8. Բանկի վարձատրությունը Հաճախորդի կողմից չապահովելու (չվճարելու) դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդին չմատուցել սույն պայմանագրով և վերջինիս անբաժանելի մաս հանդիսացող լրացուցիչ համաձայնագրերով սահմանված ծառայությունները:

4.9. Բանկն իրավունք ունի Հաճախորդին լրացուցիչ ծառայություններ մատուցելու դեպքում գանձել լրացուցիչ վճարներ՝ Հաճախորդի և Բանկի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման դեպքում:

4.10. Բրոքերային ծառայությունների դիմաց վարձատրության այլ չափ կարող է սահմանվել Հաճախորդի և Բանկի միջև կնքված առանձին համաձայնագրով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Բանկը պատասխանատվություն է կրում Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե դա արդյունք է Բանկի ոչ բարեխիղճ և ոչ շրջահայաց գործունեության:

5.2. Հաճախորդը տեղեկացված է, որ արժեթղթերում ներդրումները կապված են բարձր ռիսկերի հետ, որը կարող է հանգեցնել Հաճախորդի մոտ ֆինանսական կորուստների: Այդ կապակցությամբ Հաճախորդը համաձայնվում է չներկայացնել Բանկին գույքային և ոչ գույքային բնույթի պահանջներ՝ իր կողմից տրված պատվերների կատարման արդյունքում առաջացած վնասների համար:

5.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Պայմանագրով Բանկի պարտավորությունների կատարման ուղղակի կամ անուղղակի ձևով մասնակցող երրորդ անձանց, մաս-

նավորապես առևտրային համակարգերի, պահառուների, ռեեստրավարների, բրոքերների, բանկերի, գործընկերների և այլ անձանց, գործողությունների կամ անգործության հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

5.4. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից տրված հանձնարարության մեջ պարունակվող ցուցումների, ինչպես նաև Հաճախորդի կողմից ժամանակին չներկայացնելու արդյունքում իր հավաստիությունը կորցրած տեղեկատվության հիման վրա Բանկի իրականացրած գործողությունների կամ անգործության արդյունքում:

5.5. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ինքնուրույն կայացված ներդրումային որոշումների արդյունքների համար:

5.6. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար:

5.7. Հաճախորդը պատասխանատվություն է կրում իր մեղքով, ժամանակին չներկայացված կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև պահանջվող փաստաթղթերի ոչ ժամանակին կամ թերի ներկայացման արդյունքում Բանկին պատճառված վնասների համար:

5.8. Պայմանագրի համաձայն կնքված գործարքների հետ կապված հաշվարկների գծով պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում պարտավորությունը խախտող Կողմը տուժող Կողմին յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0.1%-ի չափով: Տույժի վճարման պահանջը Կողմերը ներկայացնում են գրավոր:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավիճակներ են համարվում տարերային աղետները, վթարները, հրդեհները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, ռազմական գործողությունները, Պայմանագրում նշված գործունեության տեսակները ուղղակիորեն կամ անուղղակի ձևով արգելող և Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրական և նորմատիվ ակտերի, պետական մարմինների որոշումների (հրամանների) օրինական ուժի մեջ մտնելու փաստերը, կամ Կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:

6.2. Պայմանագրի այն Կողմը, որը չի կարող կատարել իր պարտականությունները՝ կապված անհաղթահարելի ուժի ազդեցության հետ, պարտավոր է այդ մասին, անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու պահից 3 (երեք) բանկային օրվա ընթացքում, հայտնել մյուս Կողմին և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի նվազեցվեն Կողմերի կրած վնասները:

6.3. Պայմանագրի 6.2. կետում նշված պայմանի չկատարման դեպքում Կողմերը կորցնում են իրենց իրավունքը նման պայմանների վկայակոչման համար:

6.4. Անհաղթահարելի ուժի աղդեցության վերացումից հետո Կողմերը շարունակում են Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Բանկը չպետք է երրորդ անձանց բացահայտի ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է Հաճախորդին կամ նրա ակտիվներին, և, որը Բանկին հայտնի է դարձել Պայմանագրի կատարման ընթացքում՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարման ժամանակ Կողմերի միջև առաջացած տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության առ այն, որ սույն պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվելու է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան: Կողմերը սահմանում են, որ Արբիտրների կազմը ձևավորվում է «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգի» համաձայն: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ ք.Երևանը: Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման: Կողմերը տեղեկացվում են, որ ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» կարող են ծանոթանալ Հայաստանի բանկերի միության կայքից՝ www.uba.am, armswissbank.am կայքից, ինչպես նաև ստանալ բանկից: Վեճը լուծվում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

9.2. Պայմանագիրը կարող է Հաճախորդի կողմից միակողմանիորեն լուծվել՝ Բանկին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով: Պայմանագիրը լուծելուց հետո՝ 3 բանկային օրվա ընթացքում, Բանկը պարտավոր է Հաճախորդին կամ նրա լիազոր ներկայացուցչին փոխանցել Հաճախորդին պատկանող արժեթղթերն ու դրամական միջոցները:

9.3. Բացի 9.2. կետում նշված դեպքի, Պայմանագիրը կարող է լուծվել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Պայմանագրին միանալը (Կանոնների պայմանների ակցեպտավորումը) տեղի է ունենում համապատասխան դիմումի (այսուհետ՝ Դիմում) (Հավելված 1) ներկայացման միջոցով: Դիմումի ներկայացումը կնշանակի Հաճախորդի՝ Պայմանագրին միանալու անվերապահորեն համաձայնությունը, ընդ որում Կանոններով նախատեսված որոշակի ծառայությունների մատուցման իրավահարաբերությունները կողմերի միջև կարգավորվում են կախված Հաճախորդի կողմից Դիմումի մեջ իրականացված համապատասխան նշումներից

10.2. Բանկի մոտ գտնվող Հաճախորդի արժեթղթերն ու դրամական միջոցները, ինչպես նաև դրանց օգտագործման հետևանքով ստացված շահույթը չեն կարող գրավ դրվել կամ բռնագանձվել Բանկի պարտավորությունների դիմաց:

10.3. Բանկի սնանկացման կամ անվճարունակության, բրոքերային գործունեության լիցենզիայի դադարեցման դեպքում Հաճախորդի կողմից նրան հանձնված արժեթղթերը, դրամական միջոցները և դրանց կառավարման հետևանքով առաջացած շահույթն առանձնացվում են նրա գույքից և վերադարձվում են Հաճախորդին՝ նրա առաջին իսկ պահանջով: Ընդ որում Բանկի կողմից Հաճախորդի հաշվին կնքված գործարքների գծով Բանկի ստանձնած իրավունքներն ու պարտականություններն անցնում են Հաճախորդին:

10.4. Ստորագրելով Պայմանագիրը՝ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկը կարող է օգտագործել իր մոտ համապատասխան հաշիվներում հաշվառվող, Հաճախորդին պատկանող արժեթղթերը և/կամ դրամական միջոցներն ի շահ իրեն և/կամ իր այլ Հաճախորդների՝ պայմանով, որ Հաճախորդի կողմից Բանկին ներկայացված պատվերները կկատարվեն ժամանակին և պատշաճ կերպով:

10.5. Բանկի մոտ համապատասխան հաշիվներում հաշվառվող և Հաճախորդին պատկանող արժեթղթերի և/կամ դրամական միջոցների օգտագործման դիմաց Բանկի կողմից Հաճախորդին որևէ փոխհատուցում չի նախատեսվում:

10.6. Կողմերի համաձայնությամբ Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով:

10.7. Պայմանագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրամադրվում է պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	**Հաճախորդ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10	---
ՀՎՀՀ 02574955	---
h/h / 103002102509, ՀՀ ԿԲ	---
հեռ. (060)757000, (011)757000	

Գործադիր տնօրեն

_____ Գևորգ Մաչանյան